«Դանիելյան» ՍՊԸ-ին (լիցենզիա թիվ 753) փոխանակման կետի մասնաճյուղի լիցենզիա տրամադրելու մասին

2022-11-15

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 191 Ա
15.11.2022

«Դանիելյան» ՍՊԸ-ին (լիցենզիա թիվ 753) փոխանակման կետի մասնաճյուղի լիցենզիա տրամադրելու մասին

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «ժզ» կետով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի 9-րդ կետով, *հաշվի առնելով այն, որ* «Դանիելյան» ՍՊԸ-ն 12.08.2022թ. և 25.08.2022թ. դիմել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ փոխանակման կետի մասնաճյուղի լիցենզիա տրամադրելու միջնորդությամբ, *հիմք ընդունելով* Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 23.09.2022թ. թիվ 163 Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի դրական եզրակացությունը (2022թ. նոյեմբերի 11-ի թիվ 47 արձանագրություն)՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է.

Վերսկսել «Դանիելյան» ՍՊԸ-ին (լիցենզիա թիվ 753) փոխանակման կետի մասնաճյուղի լիցենզիա տրամադրելու 30-օրյա ժամկետը:

«Դանիելյան» ՍՊԸ-ին (լիցենզիա թիվ 753) տրամադրել փոխանակման կետի մասնաճյուղի լիցենզիա՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Արթիկ 19/16 արտադրական շենք հասցեում արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնելու

համար:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

2022 թ. նոյեմբերի 22, ք. Երևան